

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑՈՒ ՄԱՍԻՆ

ԼԵՎՈՆ ՄԵՍՐՈՊ

(Փարիզ)

Հայկական մշակույթի մեծ դեմքերեն մեկն է Նարեկացին, ընդհանրապես ճանչցված՝ իր դուխ-գործոց Նարեկով, զոր հայ ժողովուրդը կոչած է աղոթա-դիրք, հրաշագործ մատյան, իսկ քննադատները զայն վերլուծած են իրարմե տարբեր և երբեմն հակասական տեսակետներով՝ իբրև կրոնական ողբեր-գություն, քնարերգություն, հայկական լեզվի գոհար, խրթին միստիկականու-թյուն և նույնիսկ՝ ընդլզում օտար զավթիչների դեմ...

Եվ ահա տեսական մը ևս, զոր կհանձնիմ սովետահայ պատմաբանասեր-ներու ուշադրության:

Գր. Նարեկացին, եթե նոր-պղատոնական փիլիսոփայության հետևող մը չէր, ինչ որ շատ հավանական է, կարելի է վստահորեն ընդունել, որ խորապես ազդված էր այդ դպրոցեն: Ապացույց՝ նույն ինքն Նարեկը:

* * *

Գրիգոր Նարեկացիեն դարեր առաջ և դարեր ետք, Արևելքը՝ մինչև Պարս-կաստան և Միջին Ասիա՝ ենթարկված էր նոր-պղատոնականության ազդեցու-թյան: Քրիստոնեությունը և մահմեդականությունը չկարողացան խուսափել անոր ներթափանցումեն: Վերջին ծայր հետաքրքրական է երևույթը, որով ամե-նահին դարերու մեջ անդամ, կրոնքները, փիլիսոփայական տեսությունները և ընկերային նոր դրությունները դանդաղորեն, բայց մշտական թափանցումով կանցնեն երկրե երկիր, փոխելով ժողովուրդներու դիմագիծը:

Քրիստոնեությունը, օրինակ, սկզբնական շրջանին կազմված էր աշխար-հական համայնքներե, առաջնորդ ունենալով աշխարհական մարդիկ: Եկեղե-ցին, այսօրվան իմաստով, գոյություն չուներ (արդեն իսկ «եկեղեցի» բառը փոխ առնված է հունարենե և կնշանակե՝ ժողով, հավաքույթ): Առաքյալները աշխարհականներ էին և իրենց հովվական նամակները կուղղեին աշխարհա-կան համայնքներու, ինչպես՝ Գործք առաքելոցի մեջ հիշված և Թեսաղոնիկեի (Սելանիկ), Եփեսոսի, Կորնթոսի և այլն քրիստոնյաներուն ուղղված թուղթերը, որոնց մեջ ոչ մեկ հիշատակություն կա աստվածաբանական նորությունից, ծի-սականատարության, կղերականության և անոնց նվիրապետական աստիճան-ներուն:

Եվ ահա, օտար դավանանք մը հեռավոր Արևելքեն կսկսի առաջանալ և դարերու ընթացքին հաջորդաբար անցնելով հնդկական, բուդդայական, եգիպ-

տական և հունական մշակույթներեն, կմանե քրիստոնեության մեջ: Երկրորդ դարեն սկսյալ, քրիստոնեությունը կսկսի կորսնցնել իր նախնական պարզությունը: Կկազմվին այսօրվան իմաստով եկեղեցիներ, կմշակվին կրոնական օրենք և կարգ ու սարք, ծես, արարողություն, կղերական դասակարգ և նվիրապետություն: Եկեղեցին բուդդայական ծիսակատարությունն կընդօրինակե խոնկ, բուրվառ, եկեղեցական զարդեր և զգեստ: Քրիստոնեական դավանանքին մեջ մուտք կգործեն եգիպտական արարողությանց «միսթեո» կամ խորհուրդը և ատոնցմե ավելի, քրիստոնեական սկզբունքներուն զլիսովին հակասող նորություններ՝ հնդիկ, բուդդայական վանական դրությունը, կուսակրոնությունը, ճգնավորությունը, մարմինը տանջելով ձեռք բերված հոգվո փրկությունը:

Նարեկացիեն առաջ նոր-պղատոնական խորհրդապաշտությունը (միատիկականությունը) արդեն դարձած է հավատքի հիմք: Մերձավոր Արեւելքեն Միջին Ասիա, մեջը ըլլալով Հայաստանը, կծածկվին վանքերով: Կուսակրոնությունը և ճգնավորական կյանքը կհամարվին սրբություն: Միայնակյացներ կքաշվին անապատներու և լեռներու առանձնության մեջ և կապրին հնդիկ ֆաթիրներու և գերվիշներու տանջալից կյանքով:

Նարեկացիեն շատ ետքը, սելջուկ թուրքերը կգրավեն Փոքր-Ասիան, ուր կգտնեն նոր-պղատոնական բազմադամ և ազդեցիկ օթյակներ, կազմված Փոքր Ասիայի հույներե և արաբներե: Թուրքերու ճնշման տակ նոր-պղատոնականները հանձն կառնին կրոնափոխ ըլլալ, պայմանով, որ պահեն իրենց կազմակերպությունը և արարողությունները:

Փոքր-Ասիո Իկոնիա (Գոնիա) քաղաքը կդառնա իսլամացած նոր-պղատոնականներուն գլխավոր կենտրոն: Հունական օթյակներու տեղ՝ կհիմնվին մահմեդական թեքքեններ (վանքեր) և կկազմվին դերվիշական բազմաթիվ կարգեր. հավատարիմ մնալով նոր-պղատոնական հիմնական դավանանքին:

Իսլամ երկրներու մեջ նոր-պղատոնական դավանանքին ամենեն ազդեցիկ և հավատարիմ հետևողը եղավ սուֆի շարժումը («սուֆի» բառը ումանք կբացատրեն «բրդյա կոշտ վերարկու հագնող», ուրիշներ՝ փիլիսոփա, «իմաստուն», հունարեն սոֆի բառեն): Սուֆի մեծ բանաստեղծը Ջելալեդդին Ռումի, նոր-պղատոնական էր, հորը հետ 5 տարեկանն Խորասանի Բալ քաղաքն իտալացի Գոնիա: Այստեղ նա գրեց համաշխարհային գրականության գլանձերն մեկը՝ «Մեսնեի», պարսկերեն լեզվով, հսկայածավալ, բայց նրբորվեստականասիրությունը, որ կսկսի սեփական հոգեն անջատված եղեգի մը կարոտով. եղեգը կանձնավորե տիեզերական էությունն բաժնված մարդկային հոգին, որ կձգտի վերադառնալ և կրկին ձուլվել անոր հետ:

Պարսիկ գրական ոսկեդարը ամբողջովին նվիրվեցավ սուֆի իմաստասիրության: Հաֆեզ, Նիզամի, Բաբա-Թահեր և ասոնց նման տասնյակներով գրական տիտաններ, միևնույն ատեն սուֆի դերվիշներ էին: Իրենց ստեղծագործությանց խորքը նոր-պղատոնական դավանանքն է: Ողակեդարու գրականության մեջ նվիրագործված են այլաբանական բառեր և ասույթներ, ինչպես՝ «սիրուհի», «սիրական», «բարեկամ», «ծանոթ», որ կնշանակին՝ աստված, «երես», աստվածային ներկայություն, «գինի», «գինովություն»՝ միատիկ ինքնամոռացություն, «միանալ իր սիրածին»՝ անէացում գերադույն էության մեջ...

Սուֆի գրական դպրոցին հատուկ և հաճախ կրկնված պատկերներ, ինչպես՝ «թիթեռը որ լույսին կձգտի և կայրի», Հովսեփ Գեղեցիկին սիրահարած

Զուլեյխան, Լեյլային կարոտով հալումաշ Մաշնունը կմարմնավորեն սուֆիական կամ նոր-պղատոնական ձգտումը՝ հասնիլ իր սիրածին՝ աստուծո:

Սուֆի բանաստեղծներուն հատկանիշն է մտերմությունը աստուծո հետ, որուն հետ կխոսին, կբացատրվին և, ինչպես Բաբա-Թահերը, կվիճին, կսարժեն այդ աստվածը տեսանելի, շոշափելի իրականություն ըլլար:

Սուֆի գրական ոսկեդարը ամբողջ հինգ դար միահեծան իշխեց Արևելքի ժողովուրդներուն մշակութային կյանքին վրա: Պարսիկ, արաբ, եգիպտացի, սուրիացի, սուֆի գրականություն մշակեցին: Աֆղան գրականությունը իր ամենափայլուն շրջանը ապրեցավ անոր ներշնչման տակ:

Պոլսո թուրքերը ընդօրինակեցին և քայլ առ քայլ հետևեցան սուֆի գրականության:

* * *

Նարեկացին նոր-պղատոնական էր:

Այդ մասին դրական փաստ չունինք և կրնանք հիմնվել միայն երևույթներու և ենթադրությունաց վրա: Բայց, երբ կտեսնենք, թե նոր-պղատոնական դավանանքը ինչ համատարած ազդեցություն ունեւր Արևելքի մեջ, Նարեկացիեն առաջ, իր օրով և տակավին շատ ետքը, և թե ինչպես խառնված էր ժողովուրդներու կրոնական, ընկերային և մշակութային բոլոր արտահայտությանց, կարելի չէ ընդունել, որ Նարեկացին, իր ժամանակի հմուտ մտավորականը, կրնար հեռու մնալ կամ գոնե չազդվել համապարփակ այդ շարժումեն:

Արդարև, իր Նարեկը, արվեստի և գաղափարի հորինվածքով կհետևի նոր-պղատոնական դպրոցին: Գերագույն էակը իր մտերիմն է, իր պաշտամունքը անոր հանդեպ՝ կհասնի հափշտակության: Կխոսի անոր հետ ինչպես պիտի խոսեր վստահելի բարեկամի մը, հայտնելով հոգեկան ալեկոծությունները և գաղտնիքները:

Քրիստոնյա Նարեկացին, կաշկանդված կրոնքին անդիջող օրենքներով, անշուշտ չէր կրնար գործածել մահմեդական գրողներու այլաբանական պատկերներն ու բառերը («բարեկամ», «սիրուհի» և այլն), բայց իր «Խօսք ընդ Աստուծոյ»-ն ծայրե ծայր խորհրդապաշտություն է և սիրահարություն:

Եթե պարսկերենի թարգմանվեր Նարեկը, պիտի շփոթվեր Հաֆեզի կամ Բաբա-Թահերի նոր-պղատոնական գրականության հետ և կամ՝ իսլամին ներխուժումեն շատ առաջ, Աղեքսանդրիո հույն-եգիպտական մշակույթի շրջանին և Գր. Նարեկացիի ժամանակակից քրիստոնյա սուրբի մը՝ Օգոստինոսի խորհրդապաշտ «Խոստովանանք»-ին հետ:

Բաղդատության համար, այստեղ կգետնեմ նոր-պղատոնական քանի մը բառյակ.

Հսկեցի երեկ գիշեր, խոսելով բարեկամիս հետ,

Պաղատելով, որ չի փշրե ուխտերս:

Անցավ գիշերը, խոսքս էր հաղիվ սկսված,

Մի մեղադրեք զիշերը, խոսքս էր անվերջ:

Ծնա և մնացի քեզմե հավետ անբաժան

Առաջնորդված իմ աստղես, որ զիս երբեք չի լքեց:

Միացած՝ քու էություն, ես՝ խավարս

Քու լույսիդ մեջ, քու լույսովդ եմ լուսավոր:

Հուսամ ի քեզ ե քու անբաշն շնորհաց,
Իմ մեղքերուս դատավոր՝ դու ես, Տեր:
Ուր ալ ըլլա այնտեղ է քու շնորհը,
Դու միայն կտրող ես քակել-կապել իմ հոգիս:

Ով աստված իմ, օգնե անօգնականիս,
Կարոտս ունիմ քու սիրույդ, գթա ինձի և օգնե:
Պաշտպանի մը օգնության կցանկանա ամեն ոք,
Ես, խղճալիս անպաշտպան, չունիմ ոչ ոք բացի քեզմէ:

Վերոհիշյալ քառյակները առնված են սուֆի արաբի մը՝ Արու-Սաիդ Իբն-Աբիլ-Խալրի դիվանեն: Արաբները աչքառու դեր կատարեցին հելլենական մշակույթը ծանոթացնելու աշխատանքին մեջ:

Գր. Նարեկացին, շատ մը տեսակետներով դեռ կմնա անծանոթ, ուսումնասիրության հարուստ և գրեթե անկախ գետին մը, ղոր սովետահայ երիտասարդ գիտունները կրնան սեղել ու քրքրել երկարաշունչ աշխատանքով, որուն համար ամեն գյուրություն տրված է իրենց:

Արևելագիտական բազմաթիվ գրքեր կարելի է գտնել Հայաստանի Գիտությունների ակադեմիայի գրադարանին և Պետական Մատենադարանին մեջ, մասնավորաբար մեր նյութին առնչությամբ՝ R. Nicholson-ի «The Mystics of Islam»-ը և E. G. Browne-ի չորս հատոր «Literary History of Persia»-ն:

Բայց սովետահայ ուսումնասիրողը բախտավոր է նաև ոռւերեն դիտնալով: Իր տրամադրության տակ ունի ոռւս հեղինակներ, որոնք լայնորեն և շատ յրջորեն մշակած են արևելագիտությունը, սկսելով ցարական շրջանեն: Հեղափոխական հայտնի գեմքեր Բելինսկի, Գերցեն, Չերնիշևսկի, Դարբուլյուբով, արձեքավոր գործեր թողած են, նվիրված Արևելքի ընկերային կյանքին, պատմության, արվեստին, գրականության և կրոնքներուն: Իսկ սովետական շրջանին անհամեմատ թափով կգարգանա արևելագիտությունը:

О ГРИГОРЕ НАРЕКАЦИ

ЛЕВОН МЕСРОП (Париж)

(Р е з ю м е)

Григор Нарекаци — крупнейший деятель армянской культуры конца X и начала XI века. Он оставил большое поэтическое и философское наследие, изучению которого посвящены труды многих армянских исследователей.

В заметке «Григор Нарекаци в новом освещении» Левон Месроп в порядке постановки вопроса выдвигает тезис о том, что Нарекаци принадлежал к школе неоплатоников или находился под сильным влиянием этой школы.